

մտածելով, ոչ միայն ազատութիւն տուեր է յիշեալ վերապատուելիին, այլ և շատ պարգևներ ըրեր է անոր, թէ դրամով և թէ ուրիշ մեծագին ընծաներով: Միւթը յիշեալ արդէն Պուխարայէն ելած է եղեր Լաւրոպա դառնալու համար:

ԱՍՈՐԵՍՏԱՆ

Պէրու, 26 () դոստոսի:

Մարտիններուն վնասուց փոխարէն տրուելու դրամին գումարը վերջապէս որոշուեցաւ: Ընդ ա մէջը 13,500 քսակ պիտի ըլլայ. որոնցմէ 3,500 քսակը տիրաւորները պիտի վճարեն, ու 10,000 քսակը Բարձրագոյն Վուալը հատուցանելու է. այսինքն Սայտայի նահանգէն ժողովուրդը հարկը տարոց տարի մարտիններուն տրուելու է մինչև որ յիշեալ 10,000 քսակ դրամը ըմբռնայ. թէպէտև աս հատուցումը քիչ մը պիտի երկրնայ. բայց կերևի թէ քրիստոնեաները գոհ եղան աս պայմանագրութեանը վրայ:

Իբրանանու քաղաքական կառավարութեան գործը այնպէս կախ կը մնայ. տիրաւորներուն սահմանը գտնուող քրիստոնեաներուն առաջարկուեցաւ, որ տիրաւոր քայմաքաններուն իշխանութեանը հստակ գին. բայց անոնց փոխանորդները չուզեցին ընդունել աս առաջարկութիւնը ըսելով թէ լաւ կը համարին որ հրաման տրուի իրենց պանդխտանալու. որոնց պատասխան տրուեցաւ թէ կրնան երթալ ուր որ կուզեն: Ըստ փոփոխակի յայտարարութիւններէն ետքը ժողովը վերջացաւ:

Ըստ օրերս () ամանեան մէկ ֆուէկաթ մը գալով, հաղարի չափ զննուող բերաւ հոս: Գէպ 'ի Սայտա շատ զօրք կը խրկուի ամէն օր, ու կըսեն թէ զօրաց բանակ մի պիտի հաստատեն հոն տեղը:

ԱՐՏԱՐԻԱ ԵՒ ԻՐԻՒ ԸՆԳՂԻՆ

Տէրութեան քաղաքական խոհեմ անձինքը, նը մանապէս բարեսէր հասարակութիւնը մեծ ուրա

7. Կարող լինի ուսուցանել զբերականութիւն, զգրել զթուաբանութիւն, զաշխարհագրութիւն, զընդհանուր սկզբունք պատմութեանց և ուրիշ, () ճանապարհ, Բրիտանիոյ և Լնդհաստանի, և զընական պատմութիւն. և աս և զպարզ և զարդարուն ստղանագործութիւն և զհիւսուած:

8. () ճամնայն ժամ անգղիարէն խօսեսցի ընդ մանկունս առանց երբէք 'ի կիր առնել զայլազգական բառս:

9. Սա բաց 'ի դաստիարակութեան պարտուցն իւրոց, հոգ տարցի զընդհանուր կառավարութեան արդեանց 'ի դպրատանն, և զգուշացի զի բարեպէս և վայելչապէս ընթանայցեն յամենայնի:

Գ Լ Ո Ւ Խ Ե:

Յաղաք սկզբանց հրահանգութեան:

1. Որչափ և հնար իցէ, մանկանց հրահանգութիւնն համաձայն եղիցի նախկին դիտման ուսումնարանին. այսինքն բաւական առնել զնոսա առ 'ի գտանել զօրինաւոր միջոցս ապրուստի, 'ի թողուլ իւրեանց զճեմարանն:

2. Մանկունք ուսցին 'ի հայերէնի՝ զբերականութիւն, զգրութիւն, զթուաբանութիւն, զպատմութիւն, զընական պատմութիւն, և զինաստասիրութիւն բարոյական. նմանապէս յանգղիարէնի, զբերականութիւն, զգրութիւն, զթուաբանութիւն, զաշխարհագրութիւն,

խոսութեան մէջ են, որ Գաղղիոյ կառավարութեանը հետ, Ընդդիպի ունեցած բարեկամական կապակցութիւնները նորէն հաստատուեցաւ: Թէպէտ և ասիկայ դիւրին բան չէր, և չէր յուսացուէր որ ասանկ շուտով կարգի մտնայ, բայց երկու կառավարութեանց ատենակալ իշխանները մանաւանդ սըր Բոպէրթ Բիլը, ու մօսիւ Կիզօն իրենց սովորական խաղաղասէր ու խոհեմ ընտանուութեանէն շարժելով, ամէն կերպ համոզական միջոցները գործքի դրին, և փոփոխակի առանց ազգային պատուոյն դպչելու, և մէն բան բարեկամօրէն կարգի դրին, արհամարհելով վեհաձեռնարար հակառակասէր օրագրոց զրգուիչ ու հրապուրական խօսքերը. որոնցմով երկու տեղութեան մէջ եղած հին կիրքերը ու ատելութիւնները նորոգել կուզէին, ու բոլոր Լաւրոպա խոսովութեան ու արեւնահեղութեան մէջ ձգելու կը ջանային: Բայց զոհուցիւն Բատուոյն, անոնց խորհուրդը փութը հանեց սըր Բոպէրթ Բիլին, ու մօսիւ Կիզօնին խոհեմութիւնը:

Հռչակաւոր () քօնէլին ու իր ընկերաց ազատութիւնը մեծ զգացում պատճառեց Իրլանտայի մէջ. ուրտեղ արդէն մեծ ժողով մը ըրին զատ խորհրդարան մը ստանալու ընկերութեան անդամները: () քօնէլը աս ժողովին մէջ մեծ ուրախութիւն ցըցունելով, որ կրկին արժանի եղաւ իր մտերիմ բարեկամաց մէջ գտնուելը, ըսաւ, զիտնաք սի'րելիք, որ երբէք չէի յուսար որ Ընդդիպի Իրլանտան խորհրդարանը ասանկ արդարութեամբ ու անաչառութեամբ դատաստան ընելով, ինծի ու իմ ընկերացս ազատութիւն շնորհեն. աս բանս անշուշտ յիշելին Կախախնամութեան յատուկ ողորմութիւնն է:

Ընդհանրապէս կը կարծուի թէ այսուհետև աս երևելի ատենաբանը, Ընդդիպի կառավարութեան երախտիքը ու արդարասիրութիւնը աղէկ ճանաչելով՝ անոր դէմ չխօսիր, ու բոլորովին իր առջև ունեցած խռովայոյզ վարմունքը կը փոխէ, և միաբանութիւն ու սէր կը բարոյգէ. քանզի փորձով տեսաւ որ Ընդդիպի տէրութիւնը արդարութեամբ կը վարուի

զպատմութիւն, զուսումնական գիտութիւն, զպատմութիւն բնական, և զինաստասիրութիւն մեքենական. այլև ուսցին, զնշուր Պարսից և Լնդհաց, և թէ հաճոյ թուեսցի աշակերտացն:

3. Ընդունին, բաց յուսանելոյ զվերոյիշեալ մասունս դաստիարակութեան, 'ի բաց թողուլ զուսումնական գիտութիւն, զմեքենական իմաստասիրութիւն և զնշուր Պարսից և Լնդհաց, ուսցին նաև զպարզ և զարդարուն ստղանագործութիւն և զհիւսուած:

4. Մի՛ մոծանիցին և մի՛ ընթերցցին 'ի դպրոցի անդ զգրեանս, որք հակառակ իցեն կանոնաց և վարդապետութեանց եկեղեցւոյն և սոյոց:

Գ Լ Ո Ւ Խ Ը:

Կանոնք վասն բաժանման ժամանակի, և այլն:

1. Մանկունք զարթիցեն յամենայն առաւօտու 'ի ժամանակի արձակման թնդանութիւն. և յետ լուանալոյ զերեսս, և ազանելոյ զհանդերձս, թոյլ տացին նոցա խաղալ 'ի բակի անդ մինչև ցհնչումն զանգակին առաւօտեան աղօթից:

2. Իսկզբանէ ապրիլի մինչև ցսկիզբն հոկտեմբերի, առաւօտեան աղօթից զանգակն հարցի 'ի վեցերորդ և կէս ժամուն. և իսկզբանէ հոկտեմբերի մինչև ցառաջներորդ աւուր ապրիլի, յետմեքորդ ժամուն:

Իրլանտացոց հետ, ու անոնց օգտիցը ու բարեբաղդութեանը հոգ կը տանի առանց կողմնասիրութեան. ուստի այսուհետև գանգատ մը ընելու ամենաին իրաւունք չունին:

Իրլանտայի մէջ շարունակ զնուորական պատրաստութիւններ կը ըլլան. նոր զօրքեր կը սպասուին Ընդդիպին. ձմեռանոցները կը մեծցընեն, ու ամբողջները կը նորոգեն:

— Սահմանութեան ընկերութեամբ Ընդդիպին օգոստոսի 28ին, կէս օրէն երեք ժամ առաջ Սոլ Վուալը նաւահանգստէն Բոլը Լապը ըսուած շոգենաւր մտաւ, Սկոտլիա ճամբորդութիւն մը ընելու համար: Եղեանաւուն ելլելու ատենը ըստ սովորութեան թնդանութեան արձակելով, Կորին Սահմանութեան մեկնելը ողջունեցին: Բոլը Լապըն ետևէն՝ Պէք Իվլ, Լաքէյր, Սթրաւուր, Պէքը, Կորէփայն, Սթրաւուր, և ուրիշ շոգենաւր ալ գացին: Զիշեալ ամսուն 30ին Սթրաւուր Թագուհին Տընտի (Սկոտլիա) հասեր է:

— Օգոստոսի 26 ին շաբաթ զիշեր Լուաթ Լէյն ըսուած փողոցը հրկիզութիւն մը պատահեցաւ. բայց բարեբաղդաբար ժամանակին օղնութիւն հասնելով, միայն հինգ խալիթ այրեցան, ուրտեղ բանուորներ կը բնակէին:

— Միւթը փրկէրտը վերստին Կախի չափի երթայ. քանզի կառավարութեան որոշմամբ նաև որդաց կը զննուեն հիւսարտոս անուանեցաւ:

— Գաղղիացոց վեհապետ արքան հոկտեմբերի առջև օրերը զալու է Սոլտուոր, Ընդդիպի Թագուհին այցելութիւն ընելու համար: Ընդդիպի Թագաւորին հետ ուղեկից ըլլալու են, իր որդին Սոնթեմանիէի զուբար, մօսիւ Կիզօն, ու սարսն տը Սաքօն: Կը հաստատեն թէ զաղղիացոց Թագաւորը Ընտրուա երթալու չէ, և միայն շաբաթի մը չափ մնալու է Սոլտուորի արքայական պալատը:

Գ Լ Ո Ւ Խ

Փարիզ, 6 Սեպտեմբերի:

Կառավարութեան ներքին գործոց տեսուչը հե

3. Օկնի աղօթից, նախաձաշկի զանգակն հնչեսցի յութերորդ ժամուն:

4. Ուսման զանգակն հարցի յութ և կէս ժամուն, և մանկունք մնացեն 'ի դպրոցի անդ մինչև ցերկորդ ժամ, զինի միջօրէի. ապա հնչեսցի զանգակն աւարտման ուսմանց. և յետ միոյ ժամու՝ ճաշու զանգակն հնչեսցի:

5. Օկնի ճաշուն, մանկունք ընկալցին զթոյլտուութիւն խաղալոյ մինչև ցերկոյանալ. ապա աղօթից զանգակն հնչեսցի, և յետ այնորի կերիցեն զնթրիս իւրեանց:

6. Մեկնեսցին մանկունք յանկողնս իւրեանց միշտ 'ի ժամու արձակման թնդանութիւն ընդ տարին օղջոյն:

7. Մանկունք ուսցին զհայերէն և զանգղիարէն յամենայն աւուր. այսու ամենայնիւ, եթէ հոգաբարձօքն բարի համարեսցին անել սոյուհետև զնոր փոփոխութիւնս ժամանակի սակս ուսման, կարող լինին:

8. Զերկուշաբաթէ մինչև ցշաբաթ յամենայն եօթնեկի, մինչև ցերկորդ ժամն զինի միջօրէի ուսցին. իսկ յաւուրս շաբաթուց մինչև ցկէս օր միայն:

9. Զայնոսիկ ժամանակս, յորս զհայերէն ուսանին, պարտին հայերէն խօսիլ, զի բարոք և անխալ ուսցին զմայրենի լեզու իւրեանց. իսկ յորժամ զանգղիարէն ուսանին, պահանջեսցի 'ի նոցանէ միայն անգղիա

անկախ նամակը ընկալաւ Ռարձրապատիւ Ժօհնովիտի ինչպէս :

Դանձեր, 29 () Դոստոսի :

«Մարդի տէրութիւնը խնդրեց հաշտութիւն ընել մեր հետը : Մեր նաւատորմիդը այսօր Դանձեր հասաւ : ու քաղքին կառավարիչը նաևուն մէջ գալով նորէն կրկնեց իր խնդիրը : Աւստի մեր պայմանները առաջարկեցինք անոր : որ իսկոյն ընդունեց : ու նոյն օրը հաշտութեան դաշնադրութիւնը ստորագրեցաւ : Գաղղ իոյ ընդհանուր հիւպատոսարանը նորէն բացուեցաւ Դանձերի մէջ, ու քաղքին ամրոյններէն թնդանթներ արձակելով ողջունեցին մեր դրօշակը : Ըս իրիկուն հրաման պիտի խրկուի որ Սօկատօրի կղզին պարպին ու թշնամութեան գործքերը դադարին» :

Աս լուրը մեծ ուրախութիւն պատճառեց խաղաղասէր հասարակութեանը . որ միշտ անհանգիստ էր պատերազմին անհաստատ հետևածքներուն վրայ . որ ու չէր կարծէր որ այսքան քիչ ժամանակին մէջ յաջողութեամբ պսակուի գաղղ իացի ծովային ու ցամաքի զօրաց անձնանուէր քաջութիւնը : որ տէրութեան պատիւը ու փառքը աւելցուց :

Գեռ կատարելապէս յայտնի չեղաւ հաշտութեան դաշնները . բայց կրհաստատեն թէ պատերազմէն առաջ ինչ պայմաններ որ առաջարկուած էին : նոյն պայմաններէն աւելի բան մը չկայ : Արևն նաև թէ : Գաղղ իոյ կառավարութիւնը : պատերազմի համար իր ըրած ծախքին փոխարէնը անգամ չուզէր է պահանջելու Սարդի տէրութեանէն :

Ռարձրապատիւ Ժօհնովիտի իշխանը մօտ օրերս կըսպասուի Գուրն . ուրտեղ արդէն մեծ պատրաստութիւններ կըտեսնեն : արժանաւոր պատուով ընդունելու համար Դանձերի ու Սօկատօրի յաղթող արքայազուն ծովապետը . որուն համար յատուկ սօսակալութիւններ պիտի ըլլան, ու հացկերթ մը ընելու են . ու աս ընելու ծախքին համար : Գուրնի քաղաքական ժողովը արժան համարեցաւ 20 հազար Փուանք (84,000 դուլու) տալ քաղաքին սնտուկէն :

Ինչ խօսիլ :
10. Հաւուրս շարթուց , ուսումնական աշխատութիւնը աշակերտաց վերջացին սովորական հայկական աղթիւք , որ ընթերցեալ լինի յայնմ աւուր 'ի Ղեմարանի :
11. Հանգամանք եղանակի ուսուցանելը թէ զհայերէն և թէ զանգղիարէն, որպիսի են բաժանումն մանկանց 'ի կարգս . պէսպէս մասունքն , զորս պարտ իցէ ուսուցանել իւրաքանչիւր կարգի , յանձնեցին 'ի հոգս զԲԷԽԱՐ և աւազին վարժապետաց :

Գ Լ Ո Ւ Խ Թ .
Աւուրք պարագոյ :

1. Հաւուրս շարթուց աշակերտքն ընկալին զուսումն մինչև ցկէսօր :
2. Կանոնաւոր աւուրք պարագոյ եղիցին 10 աւուրք 'ի Օստիկն , սկսեալ յաւագ երկուշաբթիէն . 21 աւուրք 'ի տօնի Դանդեան Վրիստոսի , յետ տարեկան ընդհանրական հարցաքննութեան , սկսեալ 'ի 11 յունվարի (1) մինչև ցվերջ ամսոյն . 3 աւուրք 'ի բարեկենդանին . և մի օր 'ի տօնի Համբարձման . բայց յայտցանէ , 'ի կամս հայ գլխաւոր վարժապետին յանձնեալ է ,

(1) Աս կարգադրութեանց մէջ նշանակուած ամսաթիւերը , նոր թուոյն համեմատ են . այսինքն ըստ եւրոպացւոց սովորութեան :

—Սորհրդարանին որոշմամբ՝ այսուհետև Արևելեան կողմէն շոգենաւով կամ առաջատաւոր նաւով եկած ճամբորդները , ինը օր միայն պիտի մնան արգելանոցը՝ մահտարածամի զգուշութեան համար . ու ապրանքները 12 օր պիտի մնան, թէ որ մահտարածամի ձույն մը չկայ ան քաղքներուն մէջ . ուսկից կուզան : Բայց եթէ ասոր հակառակը մահտարածամ ըլլայ , անտեսը ճամբորդները 17 օր արգելանոցը մնալու են , ու ապրանքները 21 օր : Իսկ եթէ մահտարածամի կասկած միայն եղած ըլլայ , անտեսը ճամբորդները 14 օր մնալու են արգելանոցը : ու ապրանքները 15 օր :

ՍՊՈՆԻՆ

Աս տէրութիւնը հիմնկուհիմայ հանգիստ ու բարեկարգ վիճակի մէջ է : Ազգային երեսփոխանաց ընտրութիւնը առանց խռովութեան ու օրինաւոր կերպիւ գործքի կըզրուի :

Փարիզը մէջ Սպանիոյ դեսպան մօսիւ Սարթի նէղ տը լա Բօզան օգոստոսի 27'ին կըսպասուէր Մատրիտ : Աս երևելի պաշտօնատարին գալուն վըրայօք զանազան կարծիքներ կըլլան . ու կըհաստատեն թէ արտաքին գործոց տեսուչ պիտի ընտրուի քանզի հասարակօրէն կըկարծուի թէ հիմնկուան խորհրդարանին անդամոց մէջ երևելի փոփոխութիւն պիտի ըլլայ . և թէ անոր նախագահ մօսիւ Սարթիէզը փարէզ խրկուելու է դեսպանութեան պաշտօնով :

ՄԱՐՈՒԻ ԼՈՒՐՆԵՐ

Ղիարալաւարի Վրօնիքս ըսուած օրագրին մէջ կըկարդացուի , օգոստոսի 21 թուով :

«Մարդի կայսեր որդին երէկ պտրտելու եկաւ Լնդօնի տէրութեան Գործիտեպլ ըսուած հոռայրկ նաւը . ուրտեղ ընդունուեցաւ իր բարձր աստիճանին վերաբերեալ պատուովը , ու ինչպէս որ կըպահանջէր մտերիմ բարեկամութիւնը , որ շատ ժամանակէ 'ի վեր հաստատ կըմնայ Կեծին Բրիտանիոյ ու

Սարդի տէրութեանց մէջ :

Մարդի զօրքերը , որոնց ձեռքն է Սօկատօրի արևելեան կողմը եղած ամրոց մը , թնդանթներ արձակեցին անկէց Ալթէ ըսուած հոռայրկ նաւուն վրայ որ Գուրնէն հասաւ օգոստոսի 19ին : Ասիկայ երբ որ մօտիկցաւ ամրոցին , պարտաւորեցաւ կըղզիին զէպ 'ի հարաւային կողմը երթալ : Արկարծէին թէ աս հոռայրկ նաւը պատերազմական պոշարներ կըբերէր նաւատորմիղին համար . որ հարկաւորութիւն ունէր անոնցմէ . վասն զի , գաղղ իացի զինուորական պաշտօնատարաց ըսածին նայելով , Սօկատօրի վրայ 35,000 ռուբլ արձակել է նաւատորմիղը :

Մարդի զօրքերը թնդանթ կարճակեն ընդհանրապէս ամէն նաւերուն վրայ , որոնք կըմօտիկնան ծովեզրքին . քանզի կըկարծեն թէ գաղղ իացի նաւերը օտար տէրութեանց դրօշակներ կըբանան , ապահովութեամբ մօտենալու համար թշնամաց ամրոցներուն :

Միտթր Պիւլ վէրը աս աւուր մտկնեցաւ Հէբլա ըսուած շոգենաւով Վատիչէ երթալու համար , ու խիստ գոհ էր , որ մարդի ու Սպանիայի մէջ եղած վէճը կատարելապէս կարգի դրուեցաւ» :

Վատիչէի օրագիրը Տէֆէնսօր ըսուած հետևեալ յօդուածը կըյարէ :

«Լնդօնի տէրութեան Հէբլա շոգենաւը երեկ մեր նաւահանգիստը հասաւ իր հետը բերելով միտթր Պիւլ վէրը , որ Լնդօնի կառավարութեան կողմանէ լիակատար իշխանութիւն ունեցող դեսպան է Սպանիայի մէջ : Մարդի ու Սպանիոյ տէրութեան մէջ եղած վէճին լըմննալուն վրայօք տուած լուրերնիս , վերստին հաստատուեցաւ աս աւթով» :

Ք Ա Ն Ա Ք Ա Ն Խ Ա Ի Ք Ի

Օփուսիա , 23 Սեպտեմբերի :

Բերկարն սրտիւ կըծանուցանենք թէ : ամուսն 6ին ազգային ընդհանրական ժողով ըլլալով կոստանդնուպօլսոյ Հայոց պատրիարքարանը , միաբան

զօրս , պահանջեցի 'ի ծնողաց և 'ի խնամածուաց նոցին խոստանալ , զի դարձեալ բերցնեն զնոսս 'ի դպրոցըն 'ի նշանակեալ ժամանակին . և եթէ լուծանիցն զնոսսունն իւրեանց , պարտաւորեցին տալ զբաւական իրաւունս յապաղման նոցա 'ի մասին վարձատու բնակիչ աշակերտաց . իսկ սակս ձրի բնակող աշակերտաց , ոչ տացի թղլտուութիւնս այս երկրորդ անգամ , և թէ ոչ յառաջ բերցի խիստ օրինաւոր պատճառ վասն յապաղման նոցա :

Գ Լ Ո Ւ Խ ԹԱ :

Պարզէք և պատիճք , և այլն :

1. Ըստ սովորութեան եղիցի ընդհանրական հարցաքննութիւն աշակերտաց Ղեմարանին 'ի տասներորդ աւուր յունվարի ամսոյ յիւրաքանչիւր տարուղ : Հոգաբարձուք , և գլխաւոր և առաջին վարժապետք հարցաքննեցնեն զսոյնսիկ յաշակերտաց , որք ունիցին զբաւական կարողութիւն . և հասարակութիւնն հրաւիրեսցի առ այս հանդէս :
2. Կղիցի այլ ևս հարցաքննութիւն մանկանցն 'ի ներկայութեան հոգաբարձուաց , և որոշեալ այցելուաց և քանի մի բարեկամաց , զորս կամիցին նոքա բերել ընդ ինքեանս . և այս պարտի լինել չորիցս անգամ ընդ

եթէ հաճեսցի , տալ արձակուրդ աշակերտաց զայլ ևս չորս աւուրս 'ի տարին ողջոյն :

3. Բաց 'ի վերոյիշեալ աւուրցն պարագոյ յերկրորդ աւուր ապրիլ ամսոյ , որ է օր տարեգարձի հիմնաւորութեան Ղեմարանին , եղիցի արձակուրդ աշակերտաց առ յիշատակի հաստատութեան նորա : Վմանապէս եղիցին աւուրք պարագոյ անգղիացւոց աւագ ուրբաթ օրն , Դանդեան օրն , և նոր տարւոյ առաջին օրն :

Գ Լ Ո Ւ Խ Թ :

Երթեկութիւն մանկանց և ընտանեաց նոցին .

1. Թիշլ տացի ծնողաց , խնամածուաց և բարեկամաց մանկանցն գալ 'ի տեսութիւն նոցա յամենայն շաբաթու աւուր զինի միջօրէի . և 'ի ժամանակս ուսմանց յամենայն աւուրս . իսկ յայլ ժամանակս մի թիշլ տացի նոցա բնաւ մտանել 'ի բակ դպրոցին , առանց յատուկ թղլտուութեան երէց կամ առաջին հոգաբարձուին . բայց միայն եթէ կողեցեալ իցն անդր 'ի հոգաբարձուացն :
2. Տացի հրաման մանկանց երթալ յայցելութիւն ընտանեաց իւրեանց յառաջներորդ կիրակէի իւրաքանչիւր ամսոյ , և յամենայն աւուրս պարագոյ . բայց ոչ առանց խնդրոյ նոցա :
3. Հորժամ թղլտուութիւն եղիցի նոցա երթալ 'ի

Հաճութեամբ որոշուեր է, որ Ահհաստիճան աղբա- սէր Արեւի սրբազնակատար նորընտիր կաթողիկոսին անունը յիշատակուի (սմանեան տէրութեան տակը եղած ամէն եկեղեցիներուն մէջ:

Կոստանդնուպոլսոյ ամենապատիւ սրբազան Պատրիարքին տնօրէնութեամբ արդէն ամէն վիճակները հրաման խրկուեր է աս բանին համար. նմանապէս երէկուան շրջանուով հաս ալ եկաւ յիշեալ պատրիարքական հրամանը. ու այսօր առաջին անգամ սկսուեցաւ յիշատակութիւնը տեղոյս եկեղեցիներուն մէջ՝ Ահհաստիճան սրբազան կաթողիկոսին անունը. որն որ անհամեմատ ուրախութեան և միտքարութեան պատճառ եղաւ Իզմիրու ջերմեւանդ ժողովրդոյ սրտին:

—Կիրակի օրը անգղիացի նորահաս նաւատի մը մէկ պարտեզ երթալով, թաշկինակը կըհանէ իր պարանոցը կանցունէ, ու անով ծառէ մը կըկախէ ինքըզինքը: Վրանի մը ժամէն ետքը աս խեղճը մեռած գտան, առանց իմանալու անոր յուսահատութեան պատճառը:

—Երկուշաբթի զիշեր սաման խեղճսի մօտ իւր սէր քոհէ ըսուած սրճարանը մէկ յոյն մը դանակով սպաննեցին. բայց շատ բաղնութիւն ըլլալով, մարդասպանը ով ըլլալը չյայտնուեցաւ:

—Սարտէնիայի Ահհաստիճան Վարքը Երպէրթօ թագաւորին ծննդեան տարեդարձը, ամուսն 20 ինչորէքշաբթի օրը սովորական հանդէսով կատարեց նոյն տէրութեան քաղաքին հիւպատոսարանը: Կաւահանգիստը գտնուած պատերազմական նաւերը գանազան դրօշակներով զարդարուած էին. ու կէս օրին թնդանթներ արձակեցին ըստ սովորութեան ՚ի պատիւ տօնախմբութեանն:

—Ռուսաց նաւատորմիցը, որուն համար կըսէին թէ ձմեռը Լըքնէօր (Տանիմարգ) պիտի անցունէ, հիմակ կըհաստատուն թէ մեկնել է նոյն նաւահանգիստէն, Պարզիք ծովը դառնալու համար:

—Շուեռի ժողովրդոյ թիւը՝ 1836ին կըհասնէր 3,025,439 հոգիի. որոնցմէ 2,735,487ը գեղերը կըբնակէին, ու 289,952ը քաղքներու մէջ: Իսկ

1840ին յիշեալ ժողովրդոյ թիւը՝ 3,138,887 հոգի էր. որոնցմէ 2,835,741ը գեղերու մէջ էին ու 303,146 հոգին քաղքներու մէջ: Մայրաքաղաքին մէջ 84,161 բնակիչ կայ:

ԱՌԻՏՐԱԿԱՆ ԵՄԻՔԻՐ
ԻՆՊՂԻՆ

Ի իջրբուլ, 1 Սեպտեմբերի:
Բամպակ. Երեւելի փոփոխութիւն մը չեղաւ գեներուն. Եւ Օրլէանի ապրանք կըծախուի 3½-3¾ բէնս լիպրան. Լոզիպոսինը՝ 5½-6½ ըստ տեսակին, Սուրբաթի ու Մատրասի տեսակը՝ 2½-3¾: Ըստ շաբաթ ընդ ամէնը 26,020 հակ ծախուեցաւ, ու դուրսէն միայն 16,763 հակ եկաւ:

Յունվարէն մինչև այսօր գանազան կողմերէն 1 միլիոն 256,188 հակ եկած է Ի իջրբուլ. ու 1 միլիոն 349,080 հակ վաճառուեր է, անցած տարուան մնացած բամպակներովը: Հիմակուհիմայ քաղաքիս մէջ ամէն տեսակներէն 922,550 հակ բամպակ կայ:

ԳԼՂՂԻՆ
Մարտի 9 Սեպտեմբերի:

Բամպակ: Թուլ է. Ըմբրիգայի տեսակներէն զործառնութիւն մը չեղաւ. Լոզիպոսի Ժիւմէլ բամպակին զինը 62½ Ֆուանք է ամէնէն զէշ տեսակը. ու խիստ ուղոր տեսակը 95 Ֆուանքի կըծախուի յիսուն քիլօկրամը: Լոզիպոս բամպակները մեծ անշարժութեան մէջ են. մէկ մաս Վրքաղաճ ծախուեցաւ 62½ Ֆուանքի. Կիպրոսի տեսակը 52½ Ֆուանք է, Ըտանայինը 50:

Մետաքս: Մէլանիկէն բաւական ապրանք եկաւ. բայց նոր վաճառումներ մը չեղաւ, վասն զի խիստ բարձր գին կուզեն տէրերը: Ըստ օրուան արժողութիւնը 23½-26½ Ֆուանք է կէս քիլօկրամը: Մէլանիկի մետաքսին համար. Պրուսիայի կարճ Խալլային զինը՝ 21 Ֆուանք է, ու Պարսկաստանինը՝ 15-15½:

Ոչխարի բուրդ. Ըստ շաբաթ 90 հակ Ընդ

տարին ողջոյն. այսինքն յերեսներորդ աւուր մարտի, յերեսներորդ աւուր յունիսի, յերեսներորդ աւուր սեպտեմբերի, և յերեսներորդ աւուր դեկտեմբերի. յորս տնօրէնութեամբ վարժապետաց պատրաստեցի յօցեակ մի աշակերտացն ըստ իւրաքանչիւր կարգի նոցա, ծանուցանելով զամենայն զվարս, և զյառաջագիտութիւնը, զորս սրբեալ իցեն աշակերտքն յանցեալ երիս ամիսս: Եթէ վերոյ նշանակեալ աւուրքն պատահեցն ինեւ կիրակէ, յայնժամ հարցաբնութիւնն եղիցի ՚ի հետագայ երկուշաբթի:

3. Պարզէր բաղկացեալք ՚ի միտալաց, ՚ի գրեանց, և յայլ իրաց, բաշխեցնին ՚ի հոգաբարձուաց կամ յայլոց, զորս նորա կարգեացն փոխանակ իւրեանց, յաւուր ընդհանրական հարցաբնութեանն. ոչ միայն վասն գիտութեան, այլև վասն բարի վարուց անանց աշառութեան:

4. Ըրտաքսու մն ՚ի զիրոցէն՝ լիցի պատիժն, որ տացի ՚ի դէպս սաստիկ ինչ գործոյ անբարոյականութեան, անուղղայ ունակութեան, անհոգութեան և միլութեան. բայց այս պատիժ մի տացի, անանց վաւերութեան հոգաբարձուացն. որոց ծանուցե զանցն առաջին և գլխաւոր վարժապետն Ղեմարանին:

5. Որք անունն ՚ի բերան զանունն Ըստուծոյ բնորո-

նայն և երկունն, որք ստատոսին, որք թշնամանն, որք կարգան իրերաց անուանս նախատանաց, և ՚ի կիր աւուրն զանվայելու չ բառս, պատժեցին ըստ արժանեաց:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ .
Հանդերձ հատութաւ աշակերտաց:

1. Մանկունք փոխեցնեն զհանդերձս իւրեանց յիւրաքանչիւր երկուս աւուրս ընդ ամն ողջոյն:
2. Իւրաքանչիւր աշակերտ ընկալցի ամի ամի երկուստան տարս զգետուց. այսինքն 12 շապիկս, 12 զոյց վարտիս (բանթարձ), 12 սաւաւտոկս (ժաքէթ), հանդերձ միով սաւաւտոկս, և զոյց մի սաւաւտայ վարտեօք սակս ձմերան:
3. Ըմենայն որ ընկալցի առանձին մահիճս և զանկողինս, զմի բարձ գլխոյ, զմի վերորկու վասն ձմերան, զմի կտաւեայ սպիտակ ծածկոյթ, որ փոխեցի երկիցս անգամ յօթնեկի:
4. Իւրաքանչիւր աշակերտ ընկալցի զմի զոյց կօշիկս յամոյ յամիս ծախիւք Ղեմարանին:

(պիտի շարունակուի)

րիանուսոյսոյ բարակ բուրդ ծախուեցաւ 122½ Ֆլուանքի յիսուն քիլօկրամը. ու 30 հակ Լոզիպոս առաջին տեսակ ապրանքէն 85 Ֆուանքի:

Սուտամ: Պատրաստ ապրանքը 50 Ֆուանք է հարիւր քիլօկրամը. ու քանի մը ամիսէն ետքը առանգելու պայմանով 46 Ֆուանքի կըծախուի:

Կոտաւա: Կուզուի. աս օրուան արժողութիւնը պատրաստ ապրանքին համար 27½ Ֆուանք է հարիւր քիլօկրամը:

ՏԱՃԿԱՏԱՆ

Օ միւսնիս, 23 Սեպտեմբերի:

Նշանակութեան արժանի երեւելի փոփոխութիւն մը չունինք ծանուցանելու. միայն աս շաբաթ քանի մը սեփէթ աֆիօն ծախուեցաւ 88 դուռուշ չէքին պատրաստ ստակով, 90 դուռուշի պայմանաւանով:

ՓՈՒՆՆԵՆՈՒԹԻՒՆ

Կոստանդնուպոլս, 19 Սեպտեմբերի:

Լոնարա	108-107½
Փարիզ	170-169½
Մարսիլիա	169
Սիէննա	145
Թրեստ	144

Ծ Ա Մ Ի Ծ Ա Մ

Մշակութեան ջանք ունեցող հայազգի Աշուտականներէն ոմանք, որոնք երկիր ունին, Կոստանդնուպոլսոյ Մարմարայ ծովուն մէջ Բոթօճի կղզին որ տաճկերէն Քընալ կամ Արմնի աստար կըսուի. կըծանունն իրենց սիրելի Ազգին, որ հինգ հարիւրական կանգուն երկիր պիտի տան ձրի, ով որ կուզէ այնու դաշամը որ խօսք տայ շուտով շինելու իրեն տրուած տեղը:

Ըս կղզին զիբք խիստ գեղեցիկ, ախարանը զուարճալի և օդն ալ քաջառողջ ըլլալը, ով որ հոն գացիր ու աղէկ նկատուի է նէ, կրնայ վկայել. և Պօղազի չիին գեղերուն ամէնէն մօտը, որ Պէպէք է, նոյնպիսի է զրեթէ աս գեղեցիկ կղզին հեռաւորութիւնը Կոստանդնուպոլսէն, կղզիի նաւակներով երթալով:

Ըսոր մըսոյով, ով որ կուզէ, կրնայ տեղն ՚ի տեղը իմանալ Պօլիս Բուպիէ խանը Վարբենեան քիլօկրամի պարոն Սարգիսէն:

ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ

Սե Օրոպիլը շաբաթը անգամ մը կըտալի. տարեկան ստորագրութեան զինը՝ 120 դուռուշ է կանխիկ (փէլին). իսկ դուրսի երկիրներուն համար, ճամբու ծախքը աւանդին վայ է. ով որ ուզէ կրնայ ստորագրել:

- Իջրբուլ օրագրութեան տարանք:
- Պօլիս Ապիտէ խանը Հահագլեան արգիս աղային դրս:
 - Պրուսա Քաղաքիճան Մատթէս ու Գրիգոր աղայից վաճա:
 - Աղբարանը Էուսուֆեան Գեորգ աղային վաճա:
 - Դահիլի Երեւոյրեանց Մ. Ալեքսան աղային դրատունը:
 - Յօպպէ Բրուսիոյ ու Միտեալ Նահանգաց Անիկոյ կիւ պատոս, Սրայիսեան Ազոյ Յակոբին դրատունը:
 - Թրեստ Աւելեան Գրիգոր աղային դրատունը:
 - Կարին Ղազարեանց Յարութիւն աղային վաճառատունը:
 - Անի Խառապեան Ղազար աղային վաճառատունը:
 - Պաղատա Ազգից սուպին թարգման սոցոյ Խաչիկին տունը:
 - Թիֆլիզ Ռուսաց ստոյճանաւոր Կարենեան պատուելի Յ. կոր վարժապետին դրատունը:
 - Իսաբէժ Շիրմազանեան Վարդանիանց սոցոյ Գարուստին վա:
 - Թէհրան Աւարեւանց Թադէոս Խանին բնակարանը:
 - Սպահան Ալիբեանց սոցոյ Ալիբեանին վաճառատունը:
 - Պոնդա յարգի պարոնաց Աղանուր որդւոց և ընկերաց վաճա:
 - Կալկաթա պարոն Փ. Ա. Աւարեւանին դրատունը:
 - Մատրոս պարոնաց Սաւ և ընկերաց վաճառատունը:
 - Անիկոպ ու Պաղայիս յարգի պարոնաց Սեթ կողաց դրս: